ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ / 1948, № 11 *Общественные науки*

ԳՐԱԽՈՍԱՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ—ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒԻՎՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1921 Թ.

Պետական Համալսարանի հրատարակչություն, 1948 թ., Երևան

Երևանի Պետական Համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել Ա. Հակոբյանի «Քաղաքացիական կուիվները Հայաստանում 1921 թվին» խորագրով աշխատությունը։ Հեղինակի նպատակը՝ տալ Հայաստանի քաղաքացիական կուիվների պատմությունը, միանգամայն գովելի է։ Աշխատությունը բաղկացած է չորս գլխից։ Առաջին գլխում հեղինակը խոսում է Սովետական իշխանության ձեռք առած առաջին միջոցառումների մասին, տալիս է Սովետական Հայաստանի ներքին ու արտաքին դրությունը քաղաքացիական կուիվների նախօրյակին, երկրորդ գլխում կանգ է առնում Լոռու ապստամբության վրա, երրորդ գլխում խոսում է փետրվարյան ավանտյուրայի մասին և չորրորդում քննության է առնում Զանգեզուրի մաքրումը դաշնակցական բանդաներից։

Լոռու դրված ապստամբությանը հեղինակը քիչ տեղ է հատկացրել, ընդամենը 17 էջ։ Մեր կարծիքով անհրաժեշտ էր ավելի հանգամանորեն կանգ առնել այդ խնդրի վրա, մանրամասնորեն լուսաբանել Լոռու պարտիական կազմակերպությունների աշխատանքը, աշխատավորների դրությունը 1919—1920 թվերին ու կոմունիստների ղեկավարությամբ նրանց պայքարը ինտերվենտների և վերջիններիս կամակատար դաշնակների ու մենշևիկների դեմ։

Հեղինակը դրքի ներածության մեջ՝ խոսելով Հայաստանի քաղաքացիական կուիվների շուրջը լույս տեսած գրականության մեջ գոյություն ունեցող թերությունների մասին, նկատում է, որ հրապարակված գրքերում և հոդվածներում «...իրենց արժանի տեղը չեն գտել ու չեն լուսաբանվել հետևյալ կարևորագույն հարցերը, ասանց որոնց Հայաստանի քաղաքացիական կուիվների պատմությունը ճիշտ կերպով ըմբռնել և բացատրել հնարավոր չէ» (էջ 5)։

Այնուհետև նա թվում է այդ հարցերը, որոնցից մեկն էլ այն է, որ «Չի մերկացված դաշնակների՝ «Հայրենիքի փրկության կոմիտեի» թյուրքական օրիենտացիան, դաշնակների կապը թյուրքական օկուպանտների հետ և վերջիններիս կողմից դաշնակներին ցույց տրված օգնությունը» (էջ 6)։

Որ դաշնակների թյուրքական օրիենտացիան և այդ հիման վրա Թյուրքիայի հետ սկսված կապերը չեն մերկացված, ինչպես այդ հայտարարում է հեղինակը, այնքան էլ ճիշտ չէ։ Իսկ թե այդ խնդրի լուսաբանումը հեռու է բավարար լինելուց՝ այդ ճիշտ է։ Հենց պատմաբան Լեոն, որի վրա հեղինակը հենվում է ապացուցելու համար դաշնակների կողմից Ալեքսանդրապոլում 1920 թ. դեկտեմբերի 2-ին թեմալական Թյուրքիայի հետ կնքված հաշտության խայտառակությունը և ամոթալիությունը (էջ 11)— ավելի շատ է մերկացնում դաշնակների և «Հայրենիքի փրկության կոմիտեի» թյուրքական օրիենտացիան, բան դա անում է ներկա գրախոսության ենթակա դրքի հեղինակը։

Դաշնակների թյուրքական օրիենտացիան «կիրք է առնում ոչ թե փետրվարյան ավանտյուրան «կսվելուց հետո, ինչպես կարծում է հեղինակը, այլ ավելի շուտ, այն օրվանից, երբ դաշնակների համար պարզ էր իրենց պարտությունը դաշնակցական Հայաստանի և թեմալական Թյուրքիայի միջև 1920 թ. սկսված պատերազմում։ 1920 թ. նոյեմբերի կեսերից սկսած նրանք մոլեգին ագիտացիա էին անում հօգուտ Թյուրքական օրիենտացիայի։ Դրանում համոզվելու համար բավական է թերթել դաշնակների «Հառաջ» թերթի նոյեմբեր ամսվա համարները։

Ի՞նչ փաստաթղթեր է բերում իր աշխատությունում հեղինակը, մերկացնելու համար դաշնակների կապը Թյուրքիայի հետ՝ փետրվարյան ավանտյուրայի ժամանակ։ Նա բերում է երկու փաստաթուղթ։

---

1 Լեո— Թյուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Բ հատոր, Փարիզ, 1935 թիվ, էջ 241—249։

Մեկը՝ դաշնակների «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ Ս. Վրացյանի դիմումն է, որով նա օգնություն է խնդրում թեմալական կառավարությունից (էջ 76), իսկ մյուսը՝ մի պարբերություն «Ազատ Հայաստան» թերթից (էջ 76), ուր դաշնակցական թերթը լկտիաբար հայտարարում է, որ Անդրկովկասի ժողովուրդների ազատության պաշտպանը կարող է լինել միայն Թյուրքիան։ Առաջին փաստաթուղթը հանրածանոթ է, նա վաղուց հրապարակված է մեր՝ մամուլում։ Դիմելով Անկարայի կառավարության, «Հայրենիքի փրկության կոմիտեն» հենվելով Ալեքսանդրոպոլի պայմանագրի վրա, զինական օժանդակություն էր խնդրում, իսկ մինչև այդ հարցի լուծումը թեմալական կառավարության կողմից, խնդրում էր, որ թյուրքերը շտապ կարգով ազատեն 1920 թ. պատերազմի ընթացքում գերի ընկած հայ զինվորներին և տան դաշնակներին ռազմամթերք։ Դաշնակները ենթադրում էին, թե իբր իրենց կհաջողվի գերությունից ազատված հայ զինվորներին կռվի հանել Հայաստանի աշխատավորների դեմ։

Կան ուրիշ փաստեր ևս, որոնք նույնպես լուսաբանում են դաշնակների և թեմալականների փոխհարաբերությունները ավանտյուրայի ժամանակ և դաշնակների ջանքերը շարունակելու իրենց արյունոտ տիրապետությունը Թյուրքիայի օգնությամբ, որպիսի փաստերը հեղինակը պիտի բերեր ավելի համոզեցուցիչ դարձնելու համար իր թեզը։

Դրսևորելով իր թյուրքական օրիենտացիան, «Հայրենիքի փրկության կոմիտեն» ցանկություն է հայտնում իր ներկայացուցիչը ուղարկել թյուրքական կառավարության մոտ, և այդ նպատակով 1921 թ. մարտի 15-ին Ս. Վրացյանը մի նամակով դիմում է թյուրքական կառավարությանը. «... իմ կառավարությունը,— ասվում էր նամակում — Տաճկաստանի և Հայաստանի միջև նորմալ և բարեկամական հարաբերությունները սկսելու բազա է համարում այն պայմանները, որոնք ձևակերպված են անցյալ տարվա դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրոպոլում կնքված հայ-տաճկական դաշնագրի մեջ... Տոգորված լավագույն զգացումներով դեպի տաճիկ ժողովուրդը և նրա ազատության համար մարտնչող Ազգային Մեծ Ժողովի կառավարությունը, և սպասելով Ձեր կողմից շուտափույթ կարգադրության՝ երկու երկրների միջև բարեկամական կապեր հաստատելու և քաղաքական ու տնտեսական-առևտրական հարաբերություններ սկսելու խնդրի մասին՝ իմ կառավարությունը կարծում է, որ հարցի լուծումը արագացնելու ամենահարմար ձևը անձնական տեսակցությունն է»։[1]

Մարտի 21-ին Ս. Վրացյանը մի ուրիշ նամակով դիմում է Երևանում գտնվող Թյուրքիայի Արևելյան ճակատի հրամանատարության ներկայացուցիչ Բահադդինին, որն այդ անվան տակ փաստորեն թյուրքական կառավարության ներկայացուցիչն էր դաշնակների մոտ, ուր հայտարարելով «Հայրենիքի փրկության կոմիտեի» ջերմ ցանկություն բարեկամական հարաբերություններ ստեղծել Թյուրքիայի հետ, հույս է հայտնում, որ Անկարայի կառավարությունը ևս նույն ցանկությունն ունի։ «...Կամենալով այդ ցանկություններին,— ասվում էր նամակում,— գործնական արտահայտություն տալ՝ ցանկություն ունեմ իմ ներկայացուցիչը ուղարկել Արևելյան ճակատի հրամանատարության մոտ և ըստ անհրաժեշտության նաև ձեր կառավարության մոտ՝ մի շարք գործնական հարցեր տեղն ու տեղը կարգադրելու նպատակով»։[2] Թեև նամակում չի ասվում թե ինչ հարցեր են դրանք, բայց դժվար չէ հասկանալ, որ խոսքը դաշնակներին զինական օգնություն ցույց տալուն պիտի վերաբերվեր։

«Հայրենիքի փրկության կոմիտեի» մարտի 21-ի բյուլետենում ասվում էր. «Հայաստանի փրկության կոմիտեի» կարգադրությամբ շտապ նորոգվում է հայ-թյուրքական պատերազմի ժամանակ մեր կողմից թանդված Մարգարայի կամուրջը Իգդիրի մոտ, և հեռագրաթելը Ալեքսանդրոպոլի հետ՝ այդ շրջանի հետ անմիջական կապ ստեղծելու նպատակով։ Թյուրքական հրամանատարության հետ կնքված համաձայնությամբ թույլատրվում է ալեքսանդրոպոլցի փախստականներին վերադառնալ իրենց տեղերը։ Սպասվում է առևտրական հարաբերությունների վերսկսումը Թյուրքիայի հետ»։[3]

Թյուրքիայի հետ Ալեքսանդրոպոլում հաշտություն կնքելիս դաշնակները պաշտոնապես հրաժարվեցին Սևրի պայմանագրի այն հոդվածից, որը վերաբերվում էր Արևմտյան Հայաստանին։ 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին Լոնդոնում կոնֆերանս տեղի ունեցավ, որին մասնակցում էին Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Գերմանիան, Հունաստանը և թյուրքական երկու պատվիրակություններ— մեկը թեմալական կառավարության կողմից, մյուսը— Պուլսի։ Վերջինս ոչ մի դեր չէր խաղում կոնֆերանսում։ Նրան հիշում էին միայն

---

1 Հայկական ՍՍՌ Պետական Կենտրոնական արխիվ, ֆոնդ 1/37, գործ 27, թերթ 65։

2 Նույն ֆոնդը և գործը, թ. 93։

3 Նույն ֆոնդը և գործը, թ. 107։

այն դեպքում, երբ կոնֆերանսի մասնակից մյուս պետությունները կարիք էին զգում ճրնշում գործ դնել բեմալական կառավարության վրա։ Կոնֆերանսը բնում էր Գերմանիայից ստացվելիք ռեպարացիաների հարցը և Սևրի պայմանագրի՝ այսինքն Թյուրքիայի խնդիրը։ Թյուրքական երկու պատվիրակություններ կոնֆերանսում հանդես եկան իրար հետ համաձայնեցրած մի շարք պահանջներով, որոնց թվում էր և Թյուրքիայի տերիտորիայի վերականգնումն 1913 թ. սահմաններում։

Սողալով հաղթողի ոտքի տակ և հույս ունենալով նրա օգնությամբ կրկին փաթաթել հայ ժողովրդի վզին իրենց և օտարի լուծը, դաշնակները հայտնեցին կոնֆերանսին, որ իրենք լեզու են գտել Թյուրքիայի հետ։ Այդ լեզուն Անկարայի կառավարության կողմից թելադրված Հայաստանը ստրկացնող Ալեքսանդրապոլի պայմանագիրն էր։

1921 թ. մարտի 25-ին Ս. Վրացյանը Անդլիայի արտաքին գործերի մինիստրին ուղղել է հետևյալ դիմումը. «Խնդրում եմ հայտներ Լոնդոնի կոնֆերանսին հետևյալը. Հայաստանը ցանկանում է ապրել հաշտ և բարեկամաբար Թյուրքիայի հետ, ուստի ցանկանում է, որ Լոնդոնի կոնֆերանսի որոշումները առիթ չտան փոխադարձ անվստահության կամ դրժողությունների Թյուրքիայի և Հայաստանի միջև։ Այդ արվում էր, անշուշտ, բեմալականների խորհրդով։

Խոսելով փետրվարյան ավանտյուրայի կազմակերպիչների մասին, ընկ. Հակոբյանը ճիշտ նկատում է, որ «... այդ դավադրությունը ինքնամփոփ երևույթ չէր» (էջ 50), այլ մի օղակն էր հանդիսանում այն պայքարի, որը կազմակերպում և տանում էին իմպերիալիստական պետությունները Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն ուժերի հետ միասին Սովետական իշխանության դեմ։ Հեղինակը նույն էջում բերում է ՌՍՖՍՌ Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի կողմից հրատարակվող 1921 թ. փետրվարի բյուլետեններից մեկում անգլիական բուրժուազիայի օրգան «Թայմս»-ից արտատպված մի հաղորդում այն մասին, որ դաշնակների ղեկավարները 1921 թ. հունվարի սկզբներին Թիֆլիսում կոնֆերանս են ունեցել և որոշել են շարունակել պայքարը բոլշևիկների դեմ, սակայն թերթի կարծիքով հույս չկա, որ դաշնակները կկարողանան միայն իրենց ուժերով, առանց դրսի օգնության մինչև վերջ տանել այդ պայքարը։

Հեղինակը 61-րդ էջում գրում է. «Եվ իմպերիալիստները կազմակերպում են այդ օգնությունը... 1921 թվի հունվարին Թիֆլիսում դաշնակցականների ունեցած խորհրդակցությունը, որի քննության առարկան էր Հայաստանում սովետական կարգերի դեմ հակառևոլուցիոն զինված ելույթի նախապատրաստումը, իր աշխատանքները սկսեց և ավարտեց Անտանտի իմպերիալիստների, ինչպես նաև Անդրկովկասի հակառևոլուցիոն ուժերի և ռուսական սպիտակգվարդիական թափթփուկների ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ։ Հետաքրքիր են այս բոլորը, սակայն վերին աստիճանի սեղմ են։ Այստեղ է, որ հեղինակը պիտի հանդես գար փաստերով և մերկացներ թե՛ անգլիական, ֆրանսիական, թյուրքական իմպերիալիստներին և թե՛ նրանց կամակատար դաշնակներին ու անդրկովկասյան մյուս հակառևոլուցիոն ուժերին։

Ի՞նչ դեր է կատարել Թյուրքիան փետրվարյան ավանտյուրայի կազմակերպման գործում։ Այդ մասին հեղինակը բերում է Հայաստանում գործող կարմիր զորամասերի շտաբի 1921 թ. փետրվարի մի ամփոփագիրը, ուր որոշ տվյալների հիման վրա ասվում է, որ փետրվարյան ավանտյուրան «...նախապատրաստվում էր վաղուց և հետևանք է դաշնակների ու Թյուրքիայի միջև տեղի ունեցած հարաբերությունների։ Ըստ բոլոր տվյալների, այդ ապստամբությունը կազմակերպված է և տարվում է Թյուրքերի ղեկավարությամբ և հիմք կա ենթադրելու, որ դա հանդիսանում է Թյուրքիայի կողմից որպես հսկակշիռ (գործողություն) մեր առաջխաղացումը Վրաստանում։ Հետաքրքիր փաստ է այս և ինչքան մեզ հայտնի է, հրապարակվում է առաջին անգամ։ Այս փաստի հիման վրա հեղինակը հանգում է այն եզրակացության, որ «փետրվարյան ավանտյուրայի նախապատրաստման գործում դաշնակներին խոշոր չափով օգնել է նաև Թյուրքիան» (էջ 62)։ Սակայն այդ հարցը լուսաբանող ավելի կարևոր փաստեր ևս կան։

Արխիվային պրպտումների ժամանակ մեր ձեռքն ընկավ՝ երկու փաստաթուղթ։

Այդ փաստաթղթերից մեկը Սովետական Հայաստանի Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի նոտան է, ուղղված թյուրքական բանակի Արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշային. նոտան վերաբերում էր նույն կապիտան Բահաէդդինին և տրված է Հայաստանում քաղաքացիական կոիվները վերջանալուց հետո։ Նոտայի պատճենը հաղորդված է Անկարայի կառավարության արտաքին գործերի կոմիսարին և

1 Նույն ֆոնդը, գործ. թ. 116։

ՌՍՖՍՌ-ի ներկայացուցչին՝ Անդրկովկասում։ Նոտայում ասվում էր. «Հայաստանում քաղաքացիական կռիվների կրիտիկական օրերին, երբ արտաքին և ներքին ոճրագործ ուժերը բարձրացան բանվորների և գյուղացիների իշխանության դեմ, ցանկանալով խեղդել նրան արյան ալիքների մեջ, Սովետական Հայաստանի կառավարությունը կարող էր հուսալ, որ իր թշնամիների ճամբարում տեղ չպիտի լինեն բարեկամ Թյուրքիայի ներկայացուցիչներ։ Բայց դժբախտաբար մենք ստիպված ենք արձանագրել, որ կապիտան Բահալդդինի վարքագիծը քաղաքացիական կռիվների օրերին կրում էր շատ աննպաստ բնույթ ռևոլյուցիայի շահերի տեսակետից Հայաստանում։ Անհերքելիորեն ապացուցված է, որ կապիտան Բահալդդինը մի քանի անգամ այցելել է ապստամբների ճակատը, իր ճառերով խրախուսելու համար «Հայրենիքի փրկության կոմիտեի» զորամասերը։ Երևանում այդ կապիտանը թույլ է տվել իրեն հրապարակորեն ողջունել «Հայրենիքի փրկության կոմիտեի» արկածախնդիրներին և խոստանալ Թյուրքիայի օգնությունը»։

Այնուհետև նոտայում կարդում ենք. «...Մենք ստիպված ենք նրա վարքագիծը անվանել որպես միջամտություն Սովետական Հայաստանի ներքին գործերին, նրա թշնամիների կողմից։ Համարելով այդ վարքագիծը որպես միջազգային հարաբերությունների տարրական կանոնների կոպիտ խախտում, Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Ռևոլյուցիոն Կոմիտեն անթույլատրելի է համարում կապիտան Բահալդդինի հետագա ներկայությունը Հայաստանի տերիտորիայում, հրաժարվելով ճանաչել նրան հետագայում որպես ներկայացուցիչ։

Մենք հույս ունենք, որ Թյուրքիայի և Սովետական Հայաստանի բարի դրացիական փոխհարաբերությունների հետագա ամրապնդման տեսակետից արևելյան ճակատի հրամանատարը չի մերժի իսկույն ետ կանչել կապիտան Բահալդդինին»։[1]

Սովետական Հայաստանի կառավարության պահանջմամբ կապիտան Բահալդդինը լքում է Հայաստանը։

Մյուս փաստաթուղթը 11-րդ բանակի ղեկավար հրամանատարական կազմի ներկայացուցիչներից մեկի զեկուցագիրն է, կազմված 1921 թ. դեկտեմբերին։ Դրա մեջ ասվում է, որ քեմալականները Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից քիչ հետո, առանձին զրույցի ժամանակ հայտնել են, որ Սովետական իշխանության հաղթանակը «...քիչ անսպասելի էր մեզ (այսինքն թյուրքերի.— Հ. Է.) համար, բայց այդ բոլորովին չի քանդում մեր պլանները։ Ներկայումս մեր կողմից Հայաստանում նոր հեղաշրջում է պատրաստվում... այն հաշվով, որ Հայաստանը լինի Թյուրքիայի հովանավորության տակ...»։ Այնուհետև զեկուցագրի հեղինակը գրում է. «Կարելի է առանց սխալվելու ասել, որ դաշնակների վերջին ապստամբությունը (խոսքը փետրվարյան ավանտյուրայի մասին է։ Հ. Է.) ամբողջական քեմալականների գործն է»։[2]

Պիտի ենթադրել, որ Թյուրքիան Անդրկովկասում կատարած իր գործողություններում ոեկավարվում էր մյուս իմպերիալիստական պետությունների, և, հատկապես, Անգլիայի գիտությամբ և համաձայնությամբ։ Տեսնելով, որ իրեն չի հաջողվում Հունաստանի միջոցով իրագործել իր քաղաքականությունը Մերձավոր Արևելքում և մասնավորապես Թյուրքիայում, Անգլիան հետևելով Ֆրանսիայի և Իտալիայի օրինակին, սկսում է սիրաշահել քեմալականներին, ցանկանալով հրել թյուրքերին Սովետական Ռուսաստանի դեմ։ Այդ տեսակետից բնորոշ է հետևյալ փաստը։ Լոնդոնի կոնֆերանսում, որի մասին մենք արդեն հիշել ենք, «... Թյուրքերին բացահայտ կերպով ցանկանում էին հրել Սովետական երկրի դեմ։ Լլոյդ-Ջորջը զրույց էր ունեցել թյուրքական պատվիրակության նախագահ Բեկիր-Սամի-Բեյի հետ (Անկարայի կառավարության պատվիրակության ղեկավարը կոնֆերանսում։— Հ. Է.), որը վերջերս եղել էր Մոսկվայում։ Տալով նրան մի քանի հարցեր Սովետական Ռուսաստանի դրության մասին, Լլոյդ-Ջորջը զրույցի վերջում թյուրքին ուղղակի առաջարկեց Թյուրքիայի հովանավորության տակ վերցնել Անդրկովկասը՝ Բաքվի նավթահորերի հետ միասին»։[2]

Սրանք ուշագրավ փաստեր են, որոնք է՛լ ավելի համոզիչ կդարձնեին ընկ. Հակոբյանի առաջ քաշած ճիշտ հարցը։ Այս կարգի փաստերի պակասի պատճառով, հեղինակին չի հաջողվել տալ դաշնակների կապը Թյուրքիայի

1 ՀՍՍՌ Պետական Կենտրոնական արխիվ, ֆոնդ 4/114, գործ 102, թերթ 22։ Փաստաթուղթը ֆրանսերեն է, տրվում է թարգմանաբար։

1 Հայկական ՍՍՌ Պետական Կենտրոնական արխիվ, քաղվածքների ֆոնդ, 2-րդ մաս, գործ № 352, թ. 265։

[2] История дипломатии, под редакцией В. П. Потемкина, 1945 г., том III, стр. 99—100.

հետ և վերջինների դերը փետրվարյան ավանտյուրան կազմակերպելու գործում։

Մեր կարծիքով հեղինակը քիչ տեղ է հատկացրել Հայաստանի հարավում— Զամբրյուի ճակատում տեղի ունեցած ռազմական գործողություններին։ Մենք չենք պահանջում, որ նա սա այդ գործողությունների ռազմական վերլուծումը, բայց համենայն դեպս ավելի շատ պետք էր կանգ առնել դրա վրա։

Հեղինակը ճիշտ վերլուծում է Հայաստանի Ռևկոմի սխալները, տալիս է Հայաստանի մյուս կոնտրռևոլուցիոն պարտիաների՝ հրնչակյանների, էսեռների, սպեցիֆիկների, ռամկավարների և հայ կադետների դերը Հայաստանի աշխատավորների դեմ ուղղված պայքարում, որոնք փետրվարյան ավանտյուրայի ժամանակ դաշնակների գլխավորությամբ կռվում էին Սովետական իշխանության դեմ, ինչպես և ցույց է տալիս փետրվարյան ավանտյուրայի ժամանակ Հայաստանի աշխատավորների ատելությունը դեպի դաշնակները և սերը դեպի Սովետական իշխանությունը։

Աշխատության 72-րդ էջում հեղինակը գրում է. «Բոլշևիկների նկատմամբ ունեցած գազանային ատելությունը դաշնակներին «բարեկամացնում է» Թյուրքիայի հետ Բարեկամացնում բառը հեղինակն առել է չակերտների մեջ։ Դուրս է գալիս, որ հեղինակը կասկածի տակ է գնում իր քիչ առաջ արած հայտարարությունը դաշնակների կապի մասին Թյուրքերի հետ, առաջինների ցանկությունը բարեկամանալ վերջինների հետ ու նրանց օգնությամբ տապալել Սովետական իշխանությունը Հայաստանում։ Մենք չէինք կանգ առնի այս փոքր հանգամանքի վրա, եթե նկատի չունենայինք, որ ընթերցողը կարող է թյուրիմացության մեջ ընկնել։ Չակերտները այստեղ ավելորդ են։

Հեղինակը ներածության մեջ գրում է. «Մեր խնդիրը, անկասկած, չափազանց պատասխանատու է։ Այն կարծիքին չենք, որ ներկա աշխատությամբ սպառվում է 1921 թվին Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվների հարուստ պատմության ուսումնասիրությունը» (էջ 6)։ Դա միանգամայն ճիշտ է։ Քաղաքացիական կռիվների պատմությունը գեռ պիտի գրվի։ Ա. Հակոբյանի աշխատությունը մի քայլ է այդ ուղղությամբ։ Մենք ներկայումս հրապարակի վրա շատ քիչ բան ունենք Հայաստանում 1921 թ. տեղի ունեցած քաղաքացիական կռիվների վերաբերյալ։ Այն, ինչ որ կա՝ մեծ մասամբ ցրված է մեր պարբերական մամուլում։ Օգտագործելով այդ արդեն հրապարակված նյութերը, ինչպես և մասամբ արխիվային նյութեր, հեղինակը տվել է ընթերցողին— և որ այնքան կարևոր է՝ երիտասարդ ընթերցողին մի աշխատություն, որը որոշ չափով լրացնում է այդ բացը։

Հ. ԷԼՉԻԲԵԿՅԱՆ